

ԵՐԿՐԻ ԵՐԳ

ՕՐ. 1. № 1. ԱՇՆԱՆ ԵՐԳ, № 2. ՎԱՐԴԻ.

Հեղինակութիւն Խոմանոս Մելիքեանի, նուիրուած Մակար
Նկատեանի յիշատակին:

Մեր գրականութիւնը, թէ գեղարուեստական և թէ
գիտական, ինչպէս յայտնի է ամենքին, շատ աղքատ է:
Բայց ամենից աղքատը մեր երաժշտական գրականու-
թիւնն է: Բացի նկատեանի «Պատարագ» կարելի է ասել,
որ լուրջ և դղութ գործոց աշխատանքներ չունինք հրապարակի
վրայ հան, ճիշտ է, հատ ու կտոր նմուշներ ու գրուածքներ
զանազան հեղինակների, սակայն դոքա ամբողջական դործեր
չեն: Այդ աղքատիկ գրականութեան մէջն էլ մեծ տեղը բռնում
են ժողովրդական երգերը: Կեզզուկ երգեր ձայնագրեում են,
մշակուում բազմաձոյն խմբական երգեցզութեան և գաշնա-
մութիւն նուագակութեամբ մեներգների համար: Այս գործի
խոշոր ներկայացուցիչն է հ. Կոմիտաս վարդապետը, որի հրա-
պարակի վրայ գրուած կարեոր գործը առաջիմ «Հոյ քնարն» է:

Որքան և կարեոր լինի եկեղեցական և ժողովրդական
երաժշտութեան մշակութիւնը, այնուամենայնիւ հայ երա-
ժտը չպիտի սահմանափակուի միայն ոյդ դործունքութեամբ,
որը սպառնում է վերջ ի վերջոյ գառնալ բանասիրական—
աղքագրական անարիւն աշխատանք, զուրկ սուեղծագործա-
կան աղքեւթիւն և միմիայն գիտնականին հետաքրքրող: Պէտք է
երաժիշտ-գիտնականի գործը թողնել իրեն գիտնականին և
անջատել երաժիշտուստեղծագործողի աշխատանքը գիտակա-
նից: Պրանով երկակի օգուտ կատացուի—թէ գիտութիւն—
երաժշտութիւնը կանկախանայ և յաջողութեան անխօրակելի
յոյսով ձեռնամոււի կը լինի իր սեպհական մասնագիտական
գործին, և թէ երաժշտութիւն—գեղարուեութ ըուորովին
ազատ և անկաշկանդ կը լինի իր ստեղծագործական աշխա-
տանքի մէջ: Պէտք է զատել երաժիշտ-գիտնականը երաժիշտ—
ստեղծագործողից, որպէս զի արգեւնաւէտ լինին երկուսի էլ
աշխատանքները:

Այդ անջատումը չորս ուղղութեամբ կարելի է կատարել։ 1. Կարելի է գեղարուեստական տեսակէտից արձիւուր ժողովրդական և եկեղեցական երգերը մշակել՝ բազմաձայն երգեցողութեան կամ նուագի վերածելով, ինչպէս այդ անում է Կոմիտաս վարդապետը։ 2. Կարելի է ժողովրդական երածութեան ոնավ մշակել այդ ոճին համապատաստանող նիւթեր (իրրե օրինակ յիշենք պ. Սպ. Մելիքեանի «Զմեռն անցաւ»-ը, Կոմիտաս վարդապետի «Կաքաւի երգը» և այլն)։ 3. Կարելի է Եւրոպական և արևելեան ոճերի խառնուրդից մի նոր միացեալ ոճ ստեղծել (ինչպէս այդ փորձել է, թէև, ի դէպ, բաւական անցածող կերպով, պ, Բազդասարեանը իր «Մի՛ լար սլըուլք-ով») և վերջապէս 4-րդ՝ Կարելի է բոլորովին անտես առնելով հայկական երաժշտութիւնը՝ նուիրուել բացառապէս անհատական ստեղծագործութեան։

Ուղղութեանց այս չորս տիպերը գեռես ուղղակի չեն բաժանուել հայ երաժշտութեան այս սազմնային վիճակի մէջ։ մի անոյն անձի մէջ յաճախ այդ 4 ուղղութիւնն էլ միանում է։ Անշուշտ այս ըանը շատ անգամ վնասում է գործին, որը պահանջում է ուժերի կեղընացում։ Իր կատարելագործման համար։ Միայն առաջին և վերջին ուղղութիւնները ունին իրենց համեմատաբար զարուած ներկայացուցիչներ։

Այս 4 ուղղութիւններն էլ անխուրի իրենց յատուկ և կարեւը զերն ունին մեր երաժշտական գրականութեան մէջ, ուստի և ցաւալի է տեսնել, որ փոխադարձ ատելութիւն և արհամարհանք է տիրում դրանց միջև։ Բոլոր այդ ուղղութիւնները մի ընդհանուր պատուանդան պէտք է ունենան՝ հայ ողին, որը միաժամանակ և այդ 4 ուղղութեանց միացման կէտն է։ Այդ ոգին պիտի լինի կիզակէտը (Գոկուս), որի մէջ պիտի հաւաքուին չորս կողմերից եկած ճառագայթները։ «Հայ ոգի» գաղափարը, առանձնապէս զգուշացնում եմ, չպիտի հասկանալ ցարգ ըմբռնուած արտաքին, նեղ իմաստով, որպէս հասարակական քաղաքական և պատմական հաւաքական (կոլլեկտիւ) մի գաղափար, այլ որպէս խարակտերուղիական—հոգեբանական հասկացողութիւն, որպէս ազգային անհատականութեան խորը հիմք, որից պիտի ծլի ազգային հանճարը բոլոր հանճարները, լինելով ամենից անհատականը և ամենից համարդկայինը, միաժամանակ և եղել են ամենից ազգայինը։ Վազների մէջ խօսում է և՛ իր, և՛ ամբողջ մարդկութեան, և՛ գերմանական սգու խորին էութիւնը։ Հայ հանճար, ահա այն զեկավարող կեղընական ոկզրունքը, գէպի որը պէտք է ուղ-

զուլին մեր երաժշտական գործունէութեանց ըուլոր ճանապարհները: Այս կեզրօնական նպատակի շուրջը պիտի խմբութին երաժշտական դանական հայ ընկերութեամները որպէս զի ընդհանուր գործակցութեամբ կարողանան իրադորձել այդ գժուար նպատակը: Այս պահանջն է գրւում վերոյիշեալ և ուղղութեամների վրայ:

Պ. Ռոմանոս Մելիքեանը պատկանում է 4-րդ ուղղութեանը և այդ ուղղութեան ամենից շնորհալի ներկայացուցիչներիցն է: Նա սւասի հրատարակած Վահան Տէրեանի քանաստեղծութիւններից մի մնլողեկլամացիս և մի մեներդ դաշնամուրի նուադակցութեամբ: Այս անգամ էլ հրատարակել է նրկու երգ՝ Աշնան երգը և Վարդը: Առաջինի խօսքերը Յովհ: Թումանեանինն են, երկրորդինը Գէօթէինը: Հիմնուելով դրանց վրայ՝ այս կարճ գրախօսականի մէջ մենք կանենք մի երկու ընդհանուր դիտողութիւններ, որոնց ընդհանուր լինելու պատճառն այն է, որ այդ երգերը չեն սպառում պահմանոս Մելիքեանի երաժշտական նկարագիրը, չեն պարզուցում նրա պատկերը:

Պ. Մելիքեանի գլխաւոր առաւելութիւնն այն է, որ նրա երաժշտութիւնն ունի որոշ ինքնուրոյն ընաւորութիւն և անպայման առաջացնում է գեղարու եռտական յովզ: Սակայն այդ ինքնուրոյնութիւնը ոչ թէ երաժամ՝ աղդեցութիւններից ազատ, անհատական ոճի ներգործական ինքնուրոյնութիւն է, այլ՝ այսպէս կոչուած՝ կրաւորական ինքնուրոյնութիւն: այսինքն՝ ոչ թէ իր անկախ էռթեան խորքիցն է ըխում երաժշտութիւնը, աշխ նրա երաժշտական հագեկազմն այնպէս է, որ հաւաքաւմ է իր մէջ և անդրադարձնում գրոի այն աղդեցութիւնները, որոնք համապատասխանում են իր ընութեանը, իր ճաշտկին:

Նրկորդ՝ նրա երաժշտութիւնը բաւականի հարուստ է երաժշտական ոճերով ու դարձուածքներով, որոնք յանախ վարպետութեամբ հիւսուած են իրար և գեղեցիկ ամբողջութիւն են կողմում:

Խոկ գլխաւոր պակասութիւնն այն է, որ մի ընդհանուր միապազազութիւն, արամազքութեան ընդհանուր մօնուածութիւն կայ նրա տարբեր վերնագիրներ ունեցող գրաւածքների մէջ: Եթէ զա ոճի ընդհանրականութիւն լինէր, առաւելութիւն էր, որ ովհետեւ ապացոյց կը լինէր հեղինակի ինքնուրոյնութեան: սակայն, գրախօսաբար գա տրամադրութեան, բովանդակութեան միապազազութիւն է: Ինաւորութեամբ այն-

քան առարթեր բաներ, ինչպիսիք են «Վարդն» ու Աշնան երգերը, որոնք իրենց ընդհանուր արամադրութեամբ շատ չեն զանազանաւում:

Երկրորդ՝ հեղինակն աշխատում է իր երաժշտական ոճերի պաշարը խճողել, խարջել, առանց, յաճախ, ինկոտախ առնելու, որ գրուածքի բովանդակութիւնն այդ չել թոյլատրում: Այդ շատ է աչքի ընկնում յատկապէս «Վարդ»-ի մէջ: «Վարդ»-ի բառերն այս են:

Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,
Տեսաւ մի վարդ դաշտի միջն։
Վարդը տեսաւ՝ ուրախացաւ,
Մօտիկ վաղեց սիրուն վարդին։
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջն։

Սպասելի էր, որ այս ոտանաւորի երաժշտութիւնը լինէր պարզ, վճիռ, պատանեկան զուարթութեամբ պայծառացած: Սակայն պ. Մելիքեանի երաժշտութիւնը խճողուած է մինոր եօթդաշնակներով, իննդաշնակներով, անհամապատասխան մուդուլիացիաներով, որոնց չել ընթացակցում սակայն ոտանաւորի մէջ պատկերների կամ տրամադրութիւնների փոփոխութիւնն ու բերան էլ նոյն այդ երդի ընագիրը (Գեօթէլ Leidenröslein-ը) մշակել է. ուրիշն խոշոր տարբերութիւնն ուրա և Մելիքեանի դրուածքի մէջ: Եւ այդ տարբերութիւնը ոչ թէ սոսկ հեղինակների ինքնատիպ ըմբռնման մէջ է, այլ այն բանի մէջ, որ նուրեքտի մօտ երգն ու բառերը ձուլուած են մի միացեալ ամբողջութեան մէջ և երաժշտութիւնը ըլսում է անմիջապէս բառերից, ինչպէս ըստը ծաղկեց, մինչդեռ պ. Մելիքեանի երաժշտութիւնը անկախ է մատածւում, բառերն անկախ, բանասեղծութեան արամադրութիւնները ուրիշ ընոյթ ունին և ուրիշ հունով են հոսում, երաժշտութեանն ուրիշ: Երաժշտութիւնն առանձին վերցրած լաւ է, բայց չել մերւում բանաստեղծութեանը Զպիտի այնպէս անել, որ բառերը գինի գոռան, իսկ երաժշտութիւնը մեռել թաղէ, կամ ընդհակառակն, ինչպէս ասում է Պարսեանեանը:

Այս տեսակէտից համեմատաբար աւելի լաւ վիճակի մէջ է «Աշնան երգը»: սակայն սրա երաժշտութիւնն առանձին վերցրած թոյլ է «Վարդ»-ի երաժշտութիւնից:

Ինկատի առնելով պ. Ռոմանոս Մելիքեանի առաւելութիւններն ու պակասութիւնները, և մասնաւորապէս այն, որ նա բառերի հետ յաջողութեամբ չել յարմարւում, մենք կար-

ծում ենք, որ նա նուագական երաժշտութեան մէջ աւելի ընդունակութիւն ունի և կարող է յաջողութիւն դանել այդ ասպարէզում, ուստի և խորհուրդ ենք տալիս նրան, որ գէպի այդ կողմն ուզզէ իր ուժերը:

Այս ընդհանուր նկատողութիւններն անելուց յետոյ մեր բարոյական պարագն ենք համարում խրախուսել երիտասարդ երաժշտին, այն հասաւատ համոզմամբ, որ նրա մէջ կան չնորհքի և ընդունակութեանց սաղմեր, որոնք, եթէ զարդացուին ցանկալի ուղղութեամբ, անպայման կունենան փայլուն տպագայ: Իսկ ուղղութիւն տուող փարսոսը պէտք է լինի հայ երաժշտութեան կեդրոնական սկզբունքը՝ հայ հանճարը, ազգային ոգին իր խոր և լայն իմաստով, որով թափանցուած պիտի լինի հայ երաժշտի ամբողջ սաեղծագործական հոգեկազմը: Նմանութիւնը գեղարուեստ չէ, և չի կարող ապագայ ունենալ: Պ. Մելիքեանը յատկապէս պէտք է ձգտի իր պասսիւ ինքնուրոյնութիւնը յեղաշրջել ակաբեւ ինքնուրոյնութեան. իսկ այդ գործում աղղային ոգին ամենառութեղ պատուանդանը կարող է լինել նրա համար:

Յ. Յ.